

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

(Սկզբից մինչև մեր օրերը)

Ըստ պատմութեան, Նոր-Ջուղան հէնց իր հիմնարկութեան տարուց սկսած ունեցել է դպրոց: Առաջին դպրոցը հիմնուել է Ամենափրկչեան վանքում և առաջին ուսուցիչը եղել է նոյն վանքի առաջնորդ՝ Խաչատուր Կեսարացիին: Սրանից յետոյ իրար յաջորդել են ուսուցչութեամբ. Դաւիթ եպիսկոպոսն, Ստեփաննոս եպիսկոպոսն և Կոստանդ դպիրն: Վերջինիս ժամանակուայ աշակերտների թիւը հասել է մօտաւորապէս 250-ի: Սրա ժամանակն Նոր-Ջուղայի ոսկեդարն է եղել վաճառականութեան տեսակէտից, ուստի երեւելի իշխաններն ու վաճառականներն անհրաժեշտ են համարել իրենց երեխաների համար գրագիտութիւնը. նրանք բաւականացել են միայն հասարակ գրել-կարդալ, թուաբանութիւն և վաճառականական խրատներ սովորեցնելով: Այս Կոստանդ վարժապետը 1687 թուին հեղինակել է «Աշխարհաժողով» կոչուած մի գիրք, որի մէջ կան զանազան նիւթերի մասին գրուածքներ—թուաբանութիւն, վաճառականական խրատներ. Աղաբիայի թուականի գործածութիւնը և այլն խառն նիւթեր. Բերենք այստեղ մի փոքրիկ նմոյշ վաճառականական խրատներից.

«Մի երթիցես միայն 'ի ճանապարհս Անփորձ և անճանաչ ընկերի հետ մի նստիցես և մի քնիցես, գուցէ սպանցէ զքեզ և առցէ զինչս քո: Պաշարն ի տաշտէդ առ, ընկերն՝ 'ի տանէդ: Բաղաթն (թուղթն) 'ի ծոցդ պահեա, գրիչ-ղամբարն (գրիչ-թանաքամանն) 'ի ջուբդ (գրպանումդ) պահեա: Կիսագաղն (արշինանոց չափ) 'ի գօտիդ, խկըդ 'ի գլուխդ, միտքդ առ Աստուած: Ինչ Աստուած չնորհեցէ քեզ, նովաւ շատացիր... Անփորձ մարդոյ ամանաթ (աւանդ) մի տար: Զամենայն առեւտուրդ գրեա և էս օրէն՝ վաղն մի ձգեր»:

1710-ական թուականներում Մովսէս Զուղայեցի առաջնորդն աւելացրեց և ուրիշ երկու դպրոցներ. մէկն Մուրադենց ս. Յակովբայ եկեղեցում և միւսն ս. Ստեփաննոսի եկեղեցում, որոնց մասին տեղեկութիւն չկայ:

1750 թուին Հնդկաստանի Մադրաս քաղաքում բնակուող Աղա Պետրոս Ոսկանեան, նոր-ջուղայեցի երեւելի իշխանն, 26,000 ռուբլի կտակեց Նոր-Ջուղայում մի դպրոց հիմնելու համար, ուր, պիտի դասախօսուէր հայերէն, պարսկերէն և լատիներէն. սակայն այն ժամանակուայ թէ՛ Հնդկաստանի և թէ՛ Պարսկաստանի խառն հանգամանքները արգելք հանդիսացան բարերար աղայի նպատակը իրագործելու:

1825 թուին պ. Զօղէֆ Վօլֆ անունով մի անգլիացի գալով Նոր-Ջուղա, կամեցաւ իր ծախքով մի դպրոց բանալ, յատկապէս նոր-ջուղայեցի հայ երեխաներին կրթութիւն և լուսաւորութիւն տալու. սակայն սրա բարի դիտաւորութիւնն եւս խափանուեց ինչ-ինչ քաղաքական աննպաստ հանգամանքների շնորհիւ:

1833 թուին Մադրասաբնակ պ. Գրիգոր Սամեան երեւելի վաճառականն 20,000 ռուբլի կտակեց Նոր-Ջուղայում իր անունով մի դպրոց հիմնելու համար: Յաջորդ տարում հաստատուեց դպրոցն Ամենափրկչեան վանքի ծոցում և ժամանակաւորապէս ուսուցիչ կարգուեց Յակովբոս ծ. վարդապետը: Մի քանի ամսից յետոյ, Յովհաննէս առաջնորդի հրաւերով ս. Էջմիածնից եկաւ յայտնի գիտնական Մեսրոպ Թաղիադեանը որպէս ուսուցիչ նոյն դպրոցի: Երկու տարի միայն մնալով պաշտօնում նա հրաժարուեց: Ապա մի առժամանակ եւս կաղէ-կաղ կառավարուելով՝ 1837-ին փակուեց դպրոցը:

1840 թուին կրկին բացուեց նոյն Սամեան դպրոցը, Ս. Ստեփաննոս եկեղեցու գաւթում, և շարունակեց իր գոյութիւնը մինչև 1853 թիւը, երբ Սամեան տունը մասնկալաւ և դպրոցին յատկացրուած 20,000 ռուբլին կորաւ մէջտեղից:

1841 թուին պ. Բօռի անունով մի ֆրանսիացի գալով Նոր-Ջուղա՝ հայերէն, պարսկերէն և ֆրանսերէն լեզուներ սովորեցնելու համար մի դպրոց բացաւ, ուր կարճ ժամանակում բաւական աշակերտներ ևս հաւաքուեցին: Սակայն զժողովիւն ծագելով լուսաւորչական և պապական հայերի միջեւ, այն ժամանակուայ Խաչատուր առաջնորդը յետ կոչուեց Էջմիածին և պ. Բօռին ստիպուեց փակել դպրոցը և հեռանալ Պարսկաստանից:

1843 թուին Կալկաթաբնակ Աբգարեանց տունը՝ Աղա-Յովհաննէս Էլիագեանի աջակցութեամբ՝ Նոր-Ջուղայի Ս. Աստ-

ուածածին եկեղեցու բակում հաստատեց «Հայկեան հայրե-
նապրական» անունով մի դպրոց, տարեկան մօտաւորապէս
150 թուման (300 ոտւրլի) նպաստով: Այս դպրոց կոչուած տե-
ղը բոլոր իր գոյութեան օրերում պահպանում էր խալիֆա-
յական ռեժիմի բոլոր սարք ու կարգը: Սրա դրան ճակատին
մինչև ներկայ օրս մնացած երկաթագիր վերտառութիւնն է.

«Ուլ ոք կամի աշակերտել 'ի սմա
ի բերանոյն հեռի առնէ զտառ Ձա»:

1844 թուին Յովհաննէս Սուրէնեան առաջնորդը բացաւ
մի հոգեւորական դպրոց, Ամենափրկչեան վանքի նպաստներով
կառավարելու յուսով. սակայն այս և՛ երեք տարի միայն
կաղէ-կաղ ընթանալուց յետոյ՝ փակուեց:

1853 թուին Թաղէոս արք-եպիսկոպոս Բէկնազարեանի ջան-
քով բացուեցին Նոր-Ջուղայում երկու նոր դպրոցներ, մէկը Ս.
Ստեփաննոս եկեղեցու գաւթում (Սամեան դպրոցի տեղը) տարե-
կան 400 ոտւրլի եկամտով և միւսը՝ Ս. Մինաս եկեղեցու գաւթում,
տարեկան 300 ոտւրլի նպաստով: Առաջինի հիմնադիրներն էին
բաւաւիարենակ նոր-Ջուղայեցի երկու քոյրեր՝ տիկին Մարիամ
Յարութիւնեան և օր. Թաղուհի Մանուկեան: Իսկ երկրորդինը՝
ջաւայարենակ նոր-Ջուղայեցի՝ պ. Մարգար Սուքիասեան:

1854 թուին, օգոստոսի 20-ին, թէհրանաբնակ Աղա-Կա-
րապետ Սառաֆեանց վաճառականապետն՝ Թաղէոս արք-եպս.
Բէկնազարեանին տուած մի գրաւոր խոստման համաձայն՝ փա-
փագ է յայտնում 1000 թուման (2000 ոտւրլի) կտակել Ամենա-
փրկչեան վանքում 12 որդեգիր երեխաների համար մի դպրոց
բանալու, ուր պիտի աւանդուէին հայերէն, պարսկերէն, ռու-
սերէն և ֆրանսերէն լեզուներ: Այս խոստումնագիրը հաստատ-
ուեց և վաւերացրուեց թէհրանի ռուս դեսպանական կնքով և
յանձնուեց Ամենափրկչեան վանքը: Սակայն մի միջոց անցնե-
լուց յետոյ Աղա-Կարապետը մնանկացաւ և խոստումը մնաց
միայն խոստում:

1858 թուին ջաւայարենակ նոր-Ջուղայեցի պ. Մանուկ
Յորդանանեանը Նոր-Ջուղայի Ս. Կատարինեան կուսանաց
վանքի ծոցումը հիմնեց առաջին անգամ մի օրիորդաց դպրոց
իւր համեստ դրամապլիտով, ուր անմիջապէս սկսան յաճախել ու-
սումնասիրաւ հայ օրիորդները: Սրա հետեւանքը եղաւ այն,
որ Նոր-Ջուղայի այժմեան բոլոր թէ մեծ և թէ փոքր տիկին-
ները և օրիորդները, շատ քիչ բացառութեամբ, կարողանում
են կարգաւ հայերէն և գրաբարախառն աշխարհաբարով գրել:
1858 թուին, երբ Նոր-Ջուղայում բացուել է օրիորդաց դպրոց,

կովկասի և թերևս մի քանի ուրիշ յայտնի երկիրներին և ոչ մի հայաբնակ քաղաքում դեռ չի եղել ոչ մի հայ օրիորդաց դպրոց:

1867 թուին Նոր-Ջուղայի ս. Յովհաննէս եկեղեցու մի սրահում հաստատուեց «Գէորգ Յովսէփեան» անունով մի դըպրոց, ի յիշատակ նոյնանուն մի հնդկաբնակ պարոնի. զրա գոյութիւնը պահպանուեց մինչեւ 1872 թիւը, ապա փակուեց: Փակուելու պատճառն եղան բողոքականները, որոնք, դպրոցի հետ խորամանկութեամբ միանալուց յետոյ, կամեցան եկամուտը իրենց նպատակին ծառայեցնելով՝ մատաղ հայ սերնդին ձուլել բողոքականութեան հետ: Այս անախորժութեան դէմ բողոքներ դրուեցին Հնդկաստան՝ դպրոցի հիմնադրին, որ և տեսնելով իր լուծմաների չարաչար գործադրութիւնը, դադարեցրեց զրամի առաքումը և պատուիրեց փակել դպրոցը:

Վերոյիշեալ բոլոր դպրոցներին ուսման ծրագիրն եղել է միայն հին հայերէնի ընթերցանութիւն և մեկնութիւն, Չամչեանի քերականութիւն, հին ձևի վայելչագրութիւն, մասնաւոր թուաբանութիւն և անուամբ և եթ պարսկերէն, իսկ վերջերը մուտք է գործած եղել և՛ անգլիերէնը: Սակայն միայն մի քանի անհատներ են առաջադիմել, այն էլ միմիայն զրաբար հայերէնի մէջ, յատկապէս Թաղիադեանի օրով և «Սամեսան» դպրոցի երկրորդ անգամ բացուած ժամանակ:

Մի դպրոցի փակուելուց մինչեւ միւսի բացուելը, Նոր-Ջուղայի ուսումնասէր տղաները յաճախելիս են եղել տէրտէրների տները «ուսում առնելու», սակայն խեղճերը աւելի ծառայի պաշտօն են կատարելիս եղել, քան աշակերտի: Ամբողջ օրերով թէ՛ տանը և թէ՛ այգումը այդ «աշակերտները» աշխատում էին տէրտէրի համար՝ ջրել, խոտ հնձել, տուն աւելել, ճաշ բաղնիք տանել, տէրտէրակնոջ համար կերակուր պատրաստել, երեխային կառավարել ու քնեցնել, փողոցներն ընկած վաճառել այգիների յաւելցած բերքերը, և այլն: Իսկ այս բոլորից յետոյ, սովորելիս են եղել միայն Սաղմոսից մի կտոր «խոնարհեցո—ապրեցո», մի երկու գլուխ Աւետարան և մի քանի շարական: «Յայսմաւուրք» իմացողը հօ բարձրաձայն կրթութեան ստացածի պէս մի բան է եղել:

1876 թուին բողոքական միսիօնարները հաստատեցին Նոր-Ջուղայում տղայոց մի դպրոց, ուր անգլիերէն լեզուն *) սովորելու համար սկսան գունդագունդ թափուել բազմաթիւ հայ երեխաներ: Եւ իրաւ, մասնաւանդ 1879 թուին, (Դր. Հեն-

*) Անգլիերէն լեզուն սովորելը Նոր-Ջուղայեցիների իդէալն է:

րիի տեսչութեան օրով) դպրոցը նախանձելի աստիճանի հասաւ առաջադիմութեան կողմից, սակայն յետոյ, (վերոյիշեալ դժբաղդի հետանալով) սկսաւ օր ըստ օրէ յետադիմել, մինչև ներկայ ժամանակս, որ նախկին վիճակի կմախքն է միայն ներկայացնում:

Վերոյիշեալ 1876 թուականից քիչ յետոյ նոյն բողոքականները հաստատեցին մի օրիորդաց դպրոց եւս, որ նոյնպէս ունեցաւ իր փառաւոր անցեալը: Սակայն, երբ ազգ. ս. կատարինեան դպրոցը բարեկարգութեան ենթարկուեց, բողոքականների դպրոցը սկսաւ օր ըստ օրէ նսեմանալ մերին մօտ:

Բողոքականների երկսեռ դպրոցներում սովորում են մօտաւորապէս 300 աշակերտ-աշակերտուհիներ: Ուսման ծրագիրն է. կրօն (ս. Գիրք), Տաճկահայ աշխարհաբար, գրաբար, անգլիերէն, պարսկերէն, մաթեմատիկա (թուաբանութիւն, գրահաշիւ և երկրաչափութիւն), համառօտ քաղաքական աշխարհագրութիւն (անգլ. լեզուով) և ձեռագործ: Իսկ վերջերս, հետևելով մեր ազգային դպրոցներին, մտցրել են և՛ Արարատեան աշխարհաբար ու համառօտ հայոց պատմութիւն, այն էլ միայն օրիորդաց դպրոցում:

1878 թուին Նոր-Ջուղայի հայ-կաթոլիկաց վանքը հաստատեց «ս. Գրիգոր Լուսաւորիչ» անունով մի տղայոց դպրոց և քիչ յետոյ էլ օրիորդաց: Վերջինս շատ քիչ կեանք ունեցաւ, քանզի բազկացած էր միայն մի քանի կաթոլիկ հայերի աղջիկներից, որոնց դուրս գալու հետ՝ փակուեց դպրոցը: Իսկ տղայոցը կաղէ-կաղ ընթանալով մինչև 1893 թիւը, միանգամայն փակուեց: Բոլոր ժամանակ այս դպրոցի ուսման ծրագրերը մի շատ սահմանափակ բան էր: 1896-ին կրկին բացուեց, սակայն դարձեալ շատ շուտով փակման դատապարտուեց, որովհետև նոյն իսկ կաթոլիկ ծնողներն էլ չը համաձայնուեցին իրենց երեխաներին այնտեղ ուղարկել:

1880 թուին Նոր-Ջուղայից, Հնդկաստանից և Զաւայից հանգանակուած նպաստներով հիմնարկուեց այժմեան «Ազգային կենդրոնական դպրոցը»: Որի պատկանելի շինութիւնը աւարտուելուց յետոյ տղայոց երեք դպրոցները, այն է «Հայկեան հայրենասիրականը» և ս. Ստեփաննոս ու ս. Մինաս եկեղեցիներին՝ փակուելով միացուեցին սրա հետ:

Այս «կենդրոնական» դպրոցն եւս իւր հաստատման օրից մինչև 1888 թիւը, այնքան էլ չէր տարբերուում նախկին խաւիֆայական դպրոցներից. սակայն վերոյիշեալ թուից կամաց-

կամաց սկսուեցին սիստեմատիկ բարեփոխումներ մուտք գործել և առաջացաւ մի խոշոր պարտք:

1891 թուի նսայի արք-եպս. Աստուածատրեանը ժամանելով իր աթոռը՝ Նոր-Ջուղա, առաջին գործն եղաւ թափել սոյն կենդրոնական դպրոցը իր պարտքից և նորանոր եկամուտներ շարունակելու գտնել: Յետոյ ի նկատի առնելով այն հանգամանքը, որ ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի եկամուտը անկարելի պիտի լինի պահպանելու նոյն դպրոցի գոյութիւնը ապագայում, նիւթապէս միացրեց տղայոց կենդրոնական դպրոցի հետ և անուանեց «Աղգային երկսեռ դպրոցներ»: Այս կարգադրութիւնը առիթ տուեց նաև աշխատել օրիորդաց դպրոցի ուսման ծրագիրը ըստ կարելոյն հաւասարեցնելու տղայոց դպրոցի ծրագրին, որ և մասամբ յաջողուեց:

Նսայի արք-եպիսկոպոսի հրաժարուելուց յետոյ՝ 1896-ին «Աղգ. երկս. դպրոցների» հոգաբարձութիւնը, որ մինչև այդ ժամանակը կենդրոնացած էր Ամենափրկչեան վանքի հոգեւոր իշխանութեան ձեռքում, ընկաւ մի խումբ բանիբուն երիտասարդների ձեռքը, դարձեալ նոյն հոգեւոր իշխանութեան իրաւասութեան տակ: Այս բարեփոխումը յառաջ բերեց բաւական զգալի առաջադիմութիւն, թէ դիսցիպլինայի, թէ ուսման ծրագրի ընդարձակման թէ՛ ձեռնհաս ուսուցչական խումբ պահելու տեսակէտներով:

Ներկայումս «Աղգ. երկս. դպրոցներ» ուսուցչական խումբը բաղկացած է 23 հոգուց, Կովկասում և Հնդկաստանում ուսած և տեղային ազգ. դպրոցները աւարտած յայտնի անձերից: Սովորում են աւելի քան 400 աշակերտ-աշակերտուհիներ: Ուսման ծրագիրն է. կրօն, Արարատեան աշխարհաբար, գրաբար, պարսկերէն, անգլիերէն, ֆրանսերէն, մաթեմատիկա (թուաբանութիւն, դրահաշիւ և երկրաչափութիւն), բնագիտութիւն (բնական պատմութիւն, կենդանաբանութիւն, հանքաբանութիւն և մարդակազմութիւն), պատմութիւն (եկեղեցական, ընդհանուր ազգաց, հայոց, անգլիացուց և հնդկաց), աշխարհագրութիւն (թէ հայերէն և թէ անգլիերէն լեզուներով) բնական և քաղաքական, վայելչագրութիւն, հայրենագիտութիւն, գծագրութիւն, երգեցողութիւն, ձայնագրութիւն, կար ու ձև և զանազան տեսակի ձեռագործ:

Տղայոց «Կենդրոնական» դպրոցը բաղկացած է եօթն դասարաններից և երկու նախակրթարաններից, իսկ օրիորդաց «ս. Կատարինեան» դպրոցը վեց դասարաններից, երկու նախակրթարաններից, չորս նախապատրաստականներից, դրագիտական բաժանմունքներից և մանկական պարտէզից:

1900 թուին Նոր-Ջուլայի, Հնդկաստանի և Ջալայի օրինակելի նուիրարերութեամբ կառուցուեց մի ընդարձակ օրիորդաց դպրոց իր զանազան բաժանմունքներով, և Կուսանաց վանքի անյարմար և հակա-առողջապահական շինութիւն ունեցող «ս. Կատարինեան» դպրոցը իր բոլոր պարագաներով տեղափոխուեց այստեղ, պահելով հէնց իր հիմնադրի ժամանակից ստացած «ս. Կատարինեան» անունը:

Միևնոյն թուին, Մաղաքիա կալիսկոպոս Տէրունեանի ջանքովը, 2000 թումանաչափ գումար ևս հանգանակուեց Ամենափրկչեան վանքի ծոցում մի հոգևոր դպրոց բանալու, ուր պիտի կրթուեն գիւղացի և տեղացի քահանայացուները: Սա ինքն ըստ ինքեան մի աւելորդ բան է լինելու, քանի որ արդէն նոյն կրօնի առարկան խնամքով դասաւանդուում է ազգ. երկս. դպրոցներում: Հարկաւոր է յետ կենալ այս դիտաւորութիւնից և, հանգանակած գումարը յանձնելով նոյն դպրոցներին, կրօնը դարձնել տղայոց կենդրոնական դպրոցի մասնագիտութիւնը, ուր անխտիր կերպով կարող են օգտուել նոյն առարկայից բոլոր թէ տեղացի և թէ գիւղացի քահանայացուները:

1901 թուին մոսկուաքնակ տիկին Վառվառէ Քանանեանը բարեհաճեց իր ամուսնու յիշատակին հաստատել Նոր-Ջուլայում մի երկդասեան դպրոց: Սոյն դպրոցը պէտք է կապուած լինի ազգ. երկս. դպրոցների հետ պահպանելով իր որոշ ինքնուրոյնութիւնը: Անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնուած են արդէն և քիչ յետոյ ձեռնարկուելու է «Գէորգ Քանանեան դպրոցի» շինութեան կառուցումը:

ՏԻԳՐԱՆ ԱՅԳԱՐԵԱՆՑ